

ուենեալու: Իսկ երկրորդը ձրխակեր չգաանալու համար: Ասել է, աշխատանքի ընդունակ ազգատը միայն ամենահարածեշտ գեղքում էր նպաստ ստանում: որից յետոյ պարտաւոր էր անձամբ իւր հացը վաստակել: «Որ գորանայր՝ մի՛ կս գորասցել: այլ մնաստանդ վաստակեցէ գործել անոր իւրովը գրարիս: զի թաւակնն իցէ տալ ում՝ պիտոյ իցէ»: Նփես. Ի. 28 յորդորում է առաքեալը: Նուիրատուի գնահատութեան չափը սերն է, որից բղխում է նուէրը: և ոչ քանակութիւնը: Նոյն իսկ աղքատ հաւատացեալներն էլ իրենց ունեցածից բաժին են հանում իրենցից աւելի աղքատների համար: Բ. Կորնթ. Ը. 2—4: Իւրաքանչիւր քրիստոնեայ պարտաւոր էր իւր ընտանիքի պարէնը հայթայթել. «Իսկ եթէ ոք իւրոց և մանաւանդ և ընտանեաց ինամ ոչ տանիցի ի հաւատացն ուրացեալ է, և չար և սքար զանհաւատն է»: Ա. Տիմոթ. Ե. 8: Աշխտանքի դադարաւորը աւելի որոշ է արտասոյտուած Բ. Թեաւ. Գ. 12: ուր առաքեալը Տիրոջ անունով աղաչում է նրանց՝ որոնք ատահաիւթեամբ գնան, գործ ինչ ոչ գործեն: այլ յուշացեալ հետաքրքիր շրջին: զի հանդարտութեամբ գործեսցն՝ և զիւրեանց հոց կերիցեն»: Նա մինչև իսկ պատուիրում է «խորշել յամենայն եզրօրէ՝ որ ստահակն գնայցեն»: Բ. Թեա. Գ. 6. այսինքն համայնքից գուրս հանել և յիշխում է իւր քարոզչութիւնը՝ «Եթէ որ ոչ կամիցի գործել՝ և կերիցէ մի: Բ. Թեա. Գ. 10: Նոյն առաքեալն աշխատանքի յորդորում է. Մի՛ ձանձրանայք դրարիս գործել: հասկանալի է որ ձմարիտ կարօտեալների համար: Այսպէս ուրեմն համայնքի լաւ տեղում լինելու պայմաններից մէկն էլ աշխատասիրութիւնն է: Բայց այդ աշխատանքը հարստութիւն զիջելու համար չէ, այլ աւելի ասին. «նորատակի համար՝ զի բուռական իցէ տալ ում՝ պիտոյ իցէ»: Մենք աւետարանների և առաքելական թղթերի մէջ շատ կէտեր ունիւք, որ ինքնական ազատութիւնը դատադարտում է. «Տեսէք և զգոյշ լիւրօք յամենայն ազատութեան, զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրօք իցն կեանք նորա: Ղուկ. ԺԲ. 15. իսկ առաքեալն ամենայն շարեաց արմատը ազատ-

թիւնն է համարում: Ոչ միայն Պօղոս այլ և միւս առաքեալները յորդորում են բարեգործ լինել. «Հաւատք աւանց գործոց մեռեալ են»: Յակ. Բ. 26. «Որ ոչ սիրէ զեղբայր իւր, զոր տեսնէ, զԱստուած, զոր ոչն ետես, զինքդ կարիցէ սիրել: Ա. Յովհ. Գ. 20:

«Որոց և այրեաց» ինամատարութիւնը նոյնպէս համայնքի զլիւսւոր ուշադրութեան առարկայ էր: Աշխարհ կրօնաւոր լինելու պայմաններից մէկն էր բաւ Յակ. Ա. 27. այցելու լինել որոց և այրեաց ինկղութեան իւրեանց: Բայց այրինքից միայն արժանաւորներն էին համայնքից օժանդակութիւն ստանում: «Եթէ մանկունս սնուցեալ իցէ, եթէ զհիւրս ընկալեալ իցէ, եթէ զորոց զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւական լեալ իցէ, եթէ դամենայն գործոց բարեաց զհետ երթեալ իցէ: Ա. Տիմոթ. Ե. 10: Ինչպէս դատարկաշրջիկը՝ աշխատանքից խուսափողը համայնքից նպաստ չէր ստանար այնպէս և անարժան այրին: Օժանդակութիւն չեն ստանում և այն այրիները, որոնք որդիք և թոռներ ունին: Ա. Տիմ. Ե. 3—4:

Կր շարունակար:

Գարեգին Սարկաւազ:

Ի Բ Ե Ն Է Ո Ս
Ե Ի

ՆԵԹԱՐՆԵՐ ՆՈՐԱ ԳՐՈՒԱԾՆԵՐԻՑ.

Իրենեոս կամ ինչպէս մեր ասոնացոյցի մէջ և մեր նախնեաց գրուածներում սովորաբար յիշուում է՝ Նրանոս հեռեօդն առաքելոց՝ մին է եկեղեցւոյ այն ամենահին հայրերից, որոնք, առաքելական աւանդութեան ներկայացուցիչ և զօրեղ շտապողներ հանդիսանալով՝ մեծապէս նպաստել են իրենց բազմակողմանի գործունէութեամբ երկրորդ դարու նորակազմ, ներքուստ և արտաքուստ անչափ վասնդների ենթարկուած եկեղեցին անարատ պահելու և որոշ կարգերով, որոշ դաւանական սկզբունքներով հաստատուն հիմունքների վերայ հաստատելու: Նորա կեանքի վերաբերմամբ մեր ունեցած հատուկոր տեղեկութիւններից

ոմանք եղբակացնում են, թէ նա ծնուած պէտք է լինի մօտաւորապէս 140 թ.-ին. ուրիշներն աւելի իրաւացի կերպով նորա ծնունդը մինչև 115 թ. են տանում: Խօսելով Յովհաննէս աւետարանչի աշակերտ Պողիկարպոսի մասին, որ նորագոյն հետազօտութեանց համաձայն 155 թ.-ին վախճանած պէտք է լինի նա ինքն ասում է.* «Պողիկարպոս ոչ միայն յառաքելոց անտի ուսուս, և շրջեցաւ ընդ բազումս ի նոցանէ, որ տեսին զՏէրն մեր, այլ ի նոցունց իսկ յառաքելոց կարգեցաւ եպիսկոպոս յԱսիա յեկեղեցւոջ Զմիւռնացւոց, զոր և տեսաք մեք ի մանկութեան մերում, զի երկարակեաց եղև նա և ծերացաւ շատ, և յայտնապէս փառօք վիպելով կնքեաց զկեանս: Այս և ուրիշ վկայութիւններից հետեւում է, որ ըստ ամենայն հաւանականութեան նորա ծննդավայրն Ասիան է (Նիքիտոսի նահանգը) և նորա ծնօղները արդէն քրիստոնէութիւն ընդունած յոյներ. յամենայն դէպս նա այդտեղ է ստացել իւր կրթութիւնը՝ այնպիսի մարդոց մօտ և այնպիսի հողի վերայ, ուր դեռ բոլորովին թարմ էին ամենանշանաւոր առաքելների գործունէութեան հետքերը և կենդանի առաքելական դարու յիշատակներն ու աւանդութիւնները: Թէ ինչպէս նա այդտեղից Գալլիա եկաւ, որ նորա գործունէութեան զլիսաւոր ասպարէզն է եղել, որոշ յայտնի չէ. մի աւանդութեան համաձայն նա գտնուում էր Հռոմում նոյն տարին երբ Պողիկարպոս այցելութեան էր եկել Անիկոսոս եպիսկոպոսին,** և ուսուցիչ էր այնտեղ նորա մահուան ժամանակ, ուրեմն 155 թ.-ին: Հաւանականաբար այդտեղից և նա Գալլիա եկաւ, ուր Փոքր Ասիոյ հետ սերտ կապեր ունեցող Լուգլունումի (Լիոնի) համայնքի երէց ձեռնադրութեցաւ: Այնուհետև նորան տեսնում ենք կրկին Հռոմում 177 թ.-ին, մոնտանական վէճերի առթիւ նա մի թուղթ բերաւ Հռոմի Նիւթերոս եպիսկոպոսին հարաւային Գալլիայի համայնքների կողմից, նոյն ժամանակին էր, որ այս համայնքները մեծ հալածանքի ենթարկուեցան հռոմէական կա-

ռավարութեան և ամբոխի կողմից, և նահատակուեցաւ Պոնթինոս եպիսկոպոսը, ուրին և յաջորդեց Իրենէոս վերագարձից յետոյ: 190 թ.-ից վեր նորա անունն այլ ևս չէ յիշուում: Ըստ աւանդութեան նա ևս մարտիրոսական մահով է վախճանուել, 202 թ.-ին: Այսպիսով նա կենդանի յարաբերութեան մէջ է եղել իւր ժամանակակից քրիստոնէութեան կարեւորագոյն կենդրոնների հետ և եւանդուն մասնակցութիւն ունեցել այս դարում յուզուող գրեթէ բոլոր կրօնական խնդիրների և վէճերի մէջ: Ուստի իւրաքանչիւր մի փոքրիկ հատուած նորա գրուածներից իւր որոշ պատմական արժէքն ունի. Եւսեբիոսից առաջ սպորոզ հայրերից ոչ ոք իւր գործերով այնքան չէ նպաստում ծանօթանալու եկեղեցական պատմութեան այս նախկին շրջանին և պարզաբանելու նորա շատ մուլթ կողմերը, որքան նա:

Տարբարխտարար նորա բազմաթիւ գրուածներից միայն մէկն է ամբողջովին մեր ձեռքը հասել, այն ևս լատիներէն թարգմանութեամբ: Մնացածներից միայն հատուածներ կան յունարէն բնագրով և լատիներէն, ասորերէն, հայերէն թարգմանութիւններով, որոնք ի հարկ է բոլորը մեծ խնամքով ժողովուած են: Հայերէն մինչև այժմ յայտնի եղող հատուածները իւր ժողովածուի մէջ է աւել Պիտրա Ժիրանաւորը, որից և արտատպել է Հարվէյ անգլիացին: * Աւելորդ չհամարեցինք Արարատի ներկայ համարում յառաջ բերել նաև մի քանի փշրանք դոցանից, որոնք մեր ձեռագրի մէջ (հ. 1946 Մայր Աթոռի մատենադարանի մայր ցուցակի. ՌԾԾԱ թուին Լըէնէ—երեւի Էսիրնէ—քաղաքում գրուած մի ժողովածու, որի կազմողն է ոմն Վարդան) մի քանի տարբեր ընթերցուածներ են ներկայացնում: ** Ներկայ յօդուածի ուշադրութեան բուն առարկան կազմում են սակայն սորան կցուած երեք զլիսաւոր հատուածները, որոնցից այդ ժողովածուների մէջ գտնուում է միայն առաջինը (Աւրէնն և մարգարէք), այն ևս, զոնէ ինչպէս Զարբանալեանի յառաջ բերած նախարանից երևում է, տարբեր թարգ-

* Եւսեբիոս. Եկեղ. Պատմութիւն. Գալլ. Գ. Գ. ԺԴ:
 ** Տես Արարատ 1897, ապրիլ եր. 448:

* Տես Զարբանալեան, Թարգմանութիւնք. եր. 449:
 ** Համ. նոյն:

մանութեամբ: Միւս երկու հասուածները լոյս են տեսնում այսօր առաջին անգամ: Եւստի փաւերականութեան համար բացի ներքին վիպութիւններից (ա. ի մէջ օր. որպէս ծանայ Աստուծոյ դաւանարանութեան ու ս. Գրքի մեկնութեան տեսակետից կշիռ ունեցող նախնական դարձուածք, բ. ի մէջ պարզ նիւկիական դաւանանքի ազդեցութեան դեռ չենթարկուած — վերջին նախագատութիւնը հարկաւ յետոյ է աւելացրած — և առարելական հանգանակին աւելի մօտ եկող արտայայտութիւնները) նպաստաւոր մի հանգամանք է նաև այն, որ այդ հասուածները գտնուում են Մայր Աթոռի մատենադարանի ամենահին ձեռագիրներից մէկի մէջ: Այդ ձեռագիրը (հ. 1955 մայր ցուցակի) միջակ երկաթագիր է, խոշոր մազադաթի վերայ, սկզբում աւելացրած կայ եօթ թերթ և վերջը մի թերթ հաստ թուղթ հին շղագրով, որոնք այժմ արդէն կիսամաշ գրութեան մէջ են: Այս ձեռագիրը ներկայացնում է վիպութիւնների մի ընդարձակ ժողովածու, բողոքովին տարբեր նման նիւթերի վերաբերեալ մեր տեսած միւս ժողովածուներից, և պարունակում է իւր մէջ բազմաթիւ դեռ չհրատարակուած հասուածներ նախնի հայրերի գրուածներից, որ և կաշխատանք մենք հետզհետէ լոյս ընծայել Արարատի էջերում: Դժբաղդարար այս կարևոր ձեռագիրը յիշատակարան չունի, որից կարելի լինէր ժողովածուի ծագման ժամանակն ստուգել, ուստի մի զազափար տարւ համար նորա մասին, բերում ենք ստորև առաջին թերթի վերայ գտնուած, դժուարութեամբ կարգացող նախարանը: Ինչ վերաբերում է լոյս ընծայած յիշատակարանների բուն նիւթին, ձեռքի տակ անհրաժեշտ աղբիւրներ չունենալով, նոցա արժէքը որոշել թողնում ենք աւելի ձեռնհասներին:

Կ. Վ.

Յարգաւոր մի աներոյն զՏէր մեր և զԱստուած Յիսուս Քրիստոս հանդերձ իւրով մարմնով և նմին զամենայն ? հասուցանել զաստուածախնայելիական և զմարդկական և զհամագոյական մեզ եղեալ շատ մարմնոյ, եկաց մնաց և զի համագոյական մեզ եղեալ շատ մարմնով զմա ամալայակու Աստուած, և երբ յերկուս յամենայն զմա ամալայակու Աստուած, և երբ յերկուս յամենայն յարդարական * — Աստուծոյ վարդապետական յաւանցելոյ

բերանով արցնել և ուղղափառ հարանցն մերոց, և եւրպիսկոսացոց, հասուցանել, յեղից մեզ առաջի կա, գործակից եղից Աստուծոյ բնորոշ ամալ հայկոյրեանցն, արց ի սուրհակ Լիւնի և նեոսացոյր սահմանին, որ ի մոլորոյն Քաղկեդոնի եղից յարգաւ հասուց, զմնացունց իսկ զվիպութիւնս զսուր հարանցն, աստուածաշունչ և ազգակարս, ընտելաւ յարգաւ միւրեւոյն յինչ հանդերձ իւրով մարմնով զՏէր մեր և զԱստուած Յիսուս Քրիստոս և նմին զամենայն զաստուածախնայելիական և զմարդկական առցնել, և երբ մարդկան համագոյական եղեալ շատ մարմնոյ եկաց մնաց համագոյական հարեամբն իւրով Հարն և Հոգոյն Սրբոյ, և յերկուս բնորոշան սյ յամենայն, զայսակ յարգացոյն կարգեցաւ, առ հասուցանել և զգոյրոյրին մեզ, իսկ ինքեանց և այնոցի որ պատանեցն զբոց աշտոցի, զի զմա երբարով շարաց ուղից ևոցա վարդապետական և նեոսոյ ուղղափառական ևոցոց հասուցն, յայնոցեայ և մեծացեայ գործով բարութեան, արձանի յիցով զընթացս մեր զայսոյ կենաց կասարել ի Քրիստոս, և զուղից հասուցն միւրեւ ի վախճան պանցեայ, պսակել ընդ ամենայն սուրս պսական արդարութեան շարգար դասուրեկ յԱստուծոյ մերիկ Յիսուս Քրիստոս յարիսեան յարիսեանց, ամեն:

Չեռ. հ. 1945

ԵՐԱՆԵՒԻՈՑ ԻՐԷՆԵՈՍԻ ՀԵՏԵՒՈՂԻ ԱՌԱՔԵՒՈՑԵ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՂԵՒՈՑ ԴՈՒԿԴՈՒՆԻՆՈՐ ՈՐ ՓԻՂԻՍՈՓՈՅԻՑ ՈՒՍՄԱՐՔ ԳԱՅՅՈՒԱՅԵԱՆ ԶԱՆԱԶԷՐ՝

Արէնն և մարգարէք և աւետարանք քարոզեցին զԵրիստոս ծնիցեալ ի Կուսէ, և յախտակելի ի փայտին, և տեսանելի մեռելաց, և յերկինս վերերթեալ, և ի հարէ փառաւորեալ, և թագաւոր յախտեանս. և զի սա է կատարեալ միտք, Աստուծոյն Բան, որ նախապտողայն ազգե ցկին ծնիցեալ, շինակից ամենայնի, ստեղծիչն մարդոյ, յամենայնի ամենայն եղեալն. ի հայրապետսն հայրապետ, յարէնն արէն, ի ջահանայս քահանայապետ, ի թագաւորս իշխան առաջնորդական, ի մարգարէս մարգարէ, ի հրեշտակս հրեշտակ, ի մարդկան մարդ, ի Հար Որդի, յԱստուածում Աստուած, յախտեանս արքայ: Սա իսկ է սա, որ զՅոյ նաուողեաց* և զԱրքանամ առաջնորդեաց, ընդ Սահակայ կապեցաւ և ընդ Յակոբայ աւտարակենցաղեաց. ընդ Յովսէփայ վաճառեցաւ և ընդ Մովսէսի գաւրախարեաց. ժողովրդեանս արինաղբ[եա]ց և ը[նդ] Յէսուկայ Նաւեայ

* Նաւազեաց. (լուսանքում)

* Մի կամ երկու քառ եղծուած:

վիճակատուեաց. ի Դաւթի երգիչն եւ ի մարգարէան գիր կիրսն քարոզեաց. ի Կուսի մարմնացեալն եւ ի Բեթղեմ' ծնիցեալն, ի մուր խանձարդապատեալն եւ ի հովուացն տեսեալ. ի հրեշտակաց փառաորեալ. եւ ի մողացն երկրպագեալն. ի Յովաննէ ընկալեալն եւ ի Յորդանանէ մկրտեալն, յանապատի փորձեցեալն եւ Տէր գտեալ՝ զառաքեալս հաւարելով. եւ զարքայութիւն քարոզելով. զկաղըս բժշկելով եւ զտրոսս մարբելով. զկոյրս լուսածելով եւ զմեռեալս յարուցանելով. ի քաղնի երեւեալն ի ժողովրդենէ անհաւատացեալն. եւ ի քահանայապետաց ըմբռնեալն, առաջի Հերովդի յառաջ ամեալն եւ առաջի Պիղատոսի դատեցեալն. * ի մարմնի քեւեռեալն եւ ի փայտի կախեցեալն, յերկիր թաղեցեալն եւ ի մեռելոց յարուցեալն, եւ առաքելոց երեւեալն, եւ յերկինս քարձրացեալն, յաջմէն Հար նստեալն եւ ի նմանէ փառաորեալն. որպէս է յարութիւն թաղեցելոցն եւ փրկութիւն կորուսելոցն, լուսարան խաւարելոցն եւ փրկանակ քացածելոցն, հովի սպրեցելոցն եւ փեսայ եկեղեցւոյ. երասխանակընկալ ** քերովբէիցն եւ զարաւիստ հրեշտակաց Աստուած յԱստուծոյ, Որդի ի Հարէ, Յիսուս Բրիստոս արքայ յախտեանս. ամէն:

Նորին Իշխանութիւն:

Սուրբ գրութիւնք գիտն գրքիստոս որպէս մարդ գտով, այսպէս եւ ոչ գտով մարդ. եւ որպէս մարմին, այսպէս եւ հոգի եւ Բան Աստուծոյ եւ Աստուած. եւ որպէս ի Մարեմայ ի վերջինս ամենակա ծանուցեալ, այսպէս եւ նախածին ամենայն արարածոց, արտաքս եկեալ յԱստուծոյ. եւ որպէս քաղցրելով, այսպէս եւ յազեցուցանելով. եւ որպէս եւ ծարաւեալ, այսպէս եւ արքայանել, եւ վաղ հրեից յորժամ էր վե՛մ՝ Բրիստոս, եւ այժմ՝ հաւատացելոց Յիսուս տայ հոգեկան ամպել ջուր. վիճակայեալ ի կենդանութիւն յախտեանական. եւ որպէս փատակեալ, այսպէս եւ զփատակեալսն եւ զբեռնաորեալսն հանգուցանել. եւ որպէս Որդի Դաւթի, այսպէս եւ Տէր Դաւթի. եւ որպէս յԱրքայամէ, այսպէս

եւ նախ Արքայամե, եւ որպէս ծառայ Աստուծոյ, այսպէս եւ Որդի Աստուծոյ եւ Տէր ամենեցուն. եւ որպէս թուրքնկալ առ նախաստանս, այսպէս եւ փշող հոգւոյ իւրոյ աշակերտացն. եւ որպէս տրամեալ, այսպէս եւ ուրախութեան տուաւ իւրում՝ ժողովրդեանն. եւ որպէս ըմբռնելի եւ շաւշափելի, այսպէս ահա դարձեալ ընդ մէջ շարախոհացն եկեալ՝ եւ ոչ գրուեալ, եւ դրացն փակելոց ի ներքս գնացեալ եւ ոչ արգիլեալ. եւ որպէս քունելով, այսպէս եւ հրամայել ծովու եւ հողմից եւ ոգւոց. եւ որպէս ախտակրեալ, այսպէս եւ կենդանի եւ սպրեցուցիչ եւ բժշկելով յամենայն հիւանդութենէ. եւ որպէս մեռանելով, այսպէս եւ յարութիւն մեռելոց գտով. յերկրի անպատիւ, եւ յերկ[ի]նս ամենայնի պատուոյ եւ փառաց մեծագոյն. խաչեցեալ ահա ի տկարութենէ, իսկ կեցեալ ի կարութենէ, աստուածայնոյ. վայր անցեալ ի ստորագոյնս երկրի, եւ վեր անցեալ գեր ի վերոյ երկնից. քաւկանացեալն ի մուր եւ լցեալ զամենայն. երդեալն մեռեալ, եւ կենդանացեալ յախտեանս յախտեանից ամէն:

Նորին Իշխանութիւն:

Սուրբ եկեղեցի, եւ թէպէտ ըստ բոլոր է աշխարհ է * մինչ յեզերս երկրիս սեղանացեալ յառաքելոցն եւ ի նոցուն աշակերտացն ընկալաւ զմին Աստուած Հայր Ամենակալ, զարարողն զերկին եւ զերկիր, զծով եւ զամենայն զ'ի նոսայնս հաւատ. եւ ի մի Տէր Յիսուս Բրիստոս Որդին Աստուծոյ, զմարմնացեալն փասն մերոյ փրկութեան. եւ ի Հոգին Սուրբ, զ'ի ձեռն մարգարէից քարոզիչն զանաբէնութիւնս Աստուծոյ. եւ զգալուստն, եւ զ'ի Կուսէն ծնելութիւն, եւ զփտակրութիւնն, եւ զյարութիւնն ի մեռելոց, եւ զմարմնաւոր յերկինս համարձումս սիրեցելոյն Որդւոյ Բրիստոսի Յիսուսի Տեսան մերոյ. եւ զյերկնիցն փառաբ Հար գալուստ Նորա, առ ի վերազլխել զամենայնսն եւ յարուցանել զամենայն մարմին ամենայնի մարդկութեան. զի Յիսուսի Բրիստոսի Տեսան մերում եւ Աստուծոյ, եւ Փրկչի եւ Թագաւ

* զատապարտեալն.
** կառավար.

ւորի: ըստ համեմտութեան Հար սաներու թիւս
 ամեն ծուեր կորացի երկնայնեաց եւ երկ-
 րայնոց եւ ամառաբանեալսնաց: եւ ամեն
 լիզու արտաքս խոստովանեացէ նմա: եւ
 դատաստան արդարութեան յամենեւեան ար-
 քուցէ զի գնդեկանս շարութեան: եւ զնր-
 քնշտակս գանցաւորս եւ ի բացկացութեան
 կողեալս: եւ զամպարիշտս եւ զանիրաւս: եւ
 անարէնս: եւ զհայրոյիշս մարդկան ի յառի-
 տնեականս հուր անարեացէ: իսկ սրբոց եւ
 արդարոց եւ զպատուիրանս Նորս պատուաց
 եւ ի սէր Նորս մուսցելոց: ոմանց ի սկզբա-
 նէ: իսկ ոմանց յապաշխարութենէ՝ կենդա-
 նութիւն շնորհեալ: անապականութիւն եւ զյա-
 րքս պատրաստեացէ: Հայս քարոզութիւն
 պարտեալ եւ զայս հաւատ: որպէս նա-
 խասացաք: եկեղեցի: եւ թեալեալ յամենայն
 աշխարհի սերմնացեալ խնամածութեամբ
 պահէ: իբր զմի տուն բնակեալ: եւ նմանապէս
 հաւատայնոց իբր զմի անձն եւ զնոյն ունելով
 սիրտ: եւ ըստաճայնաբար զպիտակ քարոզէ
 եւ անաղէ: իբր մի բերան ստացեալ: հա-
 լատ անարեւական ճայտակից ելով նշանաւո-
 րութեան** ի Նիկեա ժողովոյն:

Չեռ. հ. 1946.

Երանոսի հետեղի առաքելոյն.

Որք ենճնուն եւ պատանեկ վերնն, գործովմու պա-
 տանան ընկալցին: քանզի ընդունայն եւ անտիկ են: որք
 երկու բնութիւնս տան քաճանեալ եւ ուրանակ զասու-
 ծոյ փեղարխան, զոր ի դիտեալն իւրում շեռնեաց սեզ:

Նորին յետ սակաւուց.

Որ եկն եւ մի բնութիւն Ասուծոյ եւ մտղոյն գոր-
 ծեաց: մեր ոչ կարացեալ կցորդ շինել անապահանութեան.
 որ աներեւոյնն է ի մեկն կողմ քանակելի: զի քս ամենայն
 մասին կցորդութեան արհցոյ՛ գանապահանութիւն:

**Ի հաւատոյ բանէն Երանոսի Լողզանայ կալիս-
 կոպրսի:**

Անշտեալ են բարք հոցս Ասուծոյ եւ ոչ գիտելով
 զի արեւ սուր (?) Բանն Միամիկն: որ միշտ ընդ մտղկու-
 րիւնս միաւորեալ եւ ընդ սեպ զանկեալ ընդ իւրում սեղ-
 ծուածիս:

Նորին.

Չներճուածս գործեն—զմեծափառաւորեալ մարմինն
 Բրիտանի քաճանեն եւ հասարակութիւն:

Նորին.

Եսայի սուք. Մերճեցայ առ կին իմ մարգարե եւ
 ծնաւ որդի: սքանկելի խորհրդակից: Ասուած: հօր իշխան
 խորհրդով: զմի բնութիւն Բանին առ ի սեղծումս իւր
 յայնկին: քանզի Բանն մարմին կողմ եւ Որդին Ասուծոյ
 որդի մտղոյն:

ԵԿԵՂԵՅԵԿԵՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈՒԻԿ ԵԿԵՂԵՅԻ

— Եպրիլի 19-ին պապը երեք ժողով (կոն-
 սիստորիում) ունեցաւ. առաջին զաղտնի ժողովում
 պապը մի ճառ խօսեց, որի մէջ յայտնեց, թէ ժոռ-
 գիր է ծիրանաւորութեան աստիճան տալ մի քանի
 եպիսկոպոսների: Այնուհետեւ յայտարարուեցան
 եպիսկոպոսական ակնոցների համար նշանակուած
 անձանց անունները: Անմիջապէս սրանից յետոյ
 տեղի ունեցաւ երկրորդ զաղտնի ժողովը: Ուր պա-
 պը յայտնեց, որ ցանկութիւն ունի երջանկայիշա-
 տակ Աստուան Մարի Զաքարիայի և Պիեր Փու-
 բլէի սրբացումը հանդիսապէս կատարելու: Ծիսա-
 կատարութեան միաբանութեան արքա Ալուաղ Մա-
 ղելլա կարգինալը մի ճառ խօսեց ապա, որի մէջ
 առաջ բերաւ յիշեալ սուրբ հայրերի կեանքն ու
 հրաշքները: Պապը դառնալով ծիրանաւորների ժո-
 ղովին՝ հարցրեց, թէ կարելի՞ են համարում այս
 սրբացումը, նրանք պատասխանեցին զրական կեր-
 պով (placet):

Սրանից յետոյ պապը բաց արաւ երրորդ հը-
 րապարակական ժողովը: ուր բացի եկեղեցականնե-
 րից կային մի քանի արտօնեալ անձինք միայն: Ծի-
 րանաւորների հպատակութեան արտայայտութիւնից
 յետոյ, կոնսիստորիումի փաստարանն սկսաւ պա-
 պի աթոռի առաջ ճառել ի պաշտպանութիւն սրբաց-
 ման երջանկայիշատակ Զաքարիայի: Մի այլ փաս-
 տարան նոյնն արաւ երջանկայիշատակ Պիեր Փուբ-
 նիէի համար: Բաճայագեւտական շորս նօտարներ
 արձանագրութիւն էին կազմում: Մինչ փաստարան-
 ները ծնկաչոք սպասում էին զահի աստիճանների
 վրայ, պապը Առլպինի ծիրանաւորի բերանով պա-
 տասխանեց, որ սրբացումն հրատարակելը մի շատ
 ծանրակշիւ գործ է: ուստի յորդորում է հա-
 լատացնալներին, որ աղաչեն Աստուծուն, իրենց
 լոյս տայ, որ շնալուին. վերջնական վճիռը յե-
 տաճգուեց մինչև մայիսի 15: Այս պատասխանից
 յետոյ փաստարանները յետ քաշուեցան և պապը
 հանդիսաւոր օրհնութիւն տուաւ ամենքին:

— Է. Ե. ժ. Պ. Սպանիոյ թագուհի ինամակա-
 լին նուիրել է մի գեղեցիկ ոսկէ պսակ, որ ընդե-
 լուզուած է թանկագին քարերով:

—Իրանս Վաղմամի փոխանը:—Գժուար թէ երբ
 և իցէ մի այնպիսի համաշխարհային խաբերայու-
 թիւն տեղի ունեցած լինի, ինչպիսին տեղի ունե-
 ցաւ միսս Իրանա Վողհանի վերաբերութեամբ:
 Երաբատի ընթերցողները ծանօթ են արդէն այն
 հրատարակութիւնների հետ, որ վերաբերում են,
 այդ օրիորդին և նրա ստանայի պաշտօնին վերա-
 բերեալ հրատարակութիւններին: Պէտք է նկա-

* հմայութեամբ.